

## ՕՐԱԳՐՈՒԹԻՒՆ ՄԵՍՐՈՊ ՎՐԴ. ՆՄԱՆԵԱՆԻ

Յիշատակարան 1917 Յունուար 1 էն:

Նոյ. 24, Ծաբաթ: Հեռուէն ցանցառ թնդամօթի ձայներ լսուեցան: Կ'ըսուի թէ Անգլիացոց յառաջապահները տասը քիլոմէթր ետ քաշուեր են:

Ժամը մէկիմ յիշեալ եպիսկոպոսները ու վարդապետները, բացի Սահակ Վրդ-էն, Միւթասարէֆի հրամանով Բոլիս տայիբէսի գացիմ գոյքերով, մեկնելու համար Դամասկոս: Ես ալ ընկերացայ: Հոն կը գտնուէին եպիսկոպոսներ եւ վարդապետներ Յունաց եւ Լատինաց Պատրիարքարաններէն, մեկնելու պատրաստ: Զանոնք թողելով այնտեղ վանք վերադարձայ: Ճամապարհիմ հանդիպեցայ Անգլ. բանակէն գերի առնուած տասը զինուորներու որոնք կը տարուէին հեծեալ ոստիկան զինուորներու հսկողութեամբ:

Երեկոյիմ ուշ ժամանակ մամբրոզները երեք բեռան օթոմոպիլներով ուղեւորեցան Դամասկոս: Պատերազմը միմչեւ երեկոյ շարունակուեր է Նէպի Սամուէլի բարձունքիմ շուրջը: Վիճակի մասիմ որոշ լուրեր չկան, եղածներն ալ հակասական են: Նապլուսի մամբան դեռ բաց է ու երթելեկը կը շարունակուի:

Նոյ. 25, Կիրակի: Հրետամի կոիւր շարունակուեցաւ ամբողջ օրը: Անգլիացիք վերջնականապէս գրաւեցին Նէպի Սամուէլի բարձունքը, որ կը տիրէ շրջանակներուն միմչեւ քսան քիլոմէթր: Երուսաղէմը պաշտպանող զօրաբաժնի հրամանատար Ալի Յուստ Պէյ Միրալայուէ բարձրացուեցաւ փաշայութեան աստիճանիմ: Ամերիկեան հպատակ 18-55 տարեկաններուն հրամայուեցաւ հեռանալ Երուսաղէմէն:

Նոյ. 26, Երկուշաբթի: Առաւօտէն երեկոյ թնդամօթածուրեան ընդհանուր ձայներ լսուեցան, Նէպի Սամուէլի կողմէ: Քանի օրէ ի վեր ժողովուրդիմ արգիլուած է Քաղաքապետարանի հիւանդանոցէն անդիմ անցնիլ Անգլ. Թնդամօթներէ արձակուած ուսմբերու վտանգիմ չենթարկուելու համար:

Օրուան զանազան ժամերու օդամաւեր երեւցան ըստ սովորութեան: Պատերազմի վիճակի վրայով ստոյգ տեղեկութիւններ չունիմք: Քաղաքական պաշտօնէութիւնը հեռացած է Բեթղեհէմէն: Գիւղը յամձնուած է մի քանի բօլիսներու հսկողութեան:

Նոյ. 27, Երեքշաբթի: Առաւօտուան ժամը 4էն սկսեալ մեթրալիօզի ու հրացանի պայթումներ կը լսուին շարունակ հիւսիս արեւմտեան կողմէն. հիմա ժամը 5.30 է ու դեռ կը տեւէ: Թնդամօթի որոտն ալ սկսաւ լսուիլ, որ ընդհատ ընդհատ շարունակուեցաւ միմչեւ երեկոյ: Պատերազմը վեց օրէ ի վեր կը տեւէ միմչեւ քիչ մը անդիմ, եւ վիճակի մասիմ ճշգրիտ տեղեկութիւն չունիմք ու ամստուգութեան մէջ կ'ապրիմք: Իրողութիւն է սակայն թէ Օսմանցիք լուրջ դիմադրութիւն կ'ընեն ու թշնամիիմ յառաջադացումը կասեցուցած են: Մթեսարաֆը յայտարարութիւններ փակցուց գաղութիմ մէջ, որ կը հրաւիրէ բնակչութեան՝ պաղարիւնութիւնը չկորսնցնել, եւ կը վստահացունէ՝ թէ Օսմ. քաջարի բանակը մոր գալիք ուժերով գօրացած, պիտի յաջողի թշնամիմ վանել հոն, ուրկէ եկած էր, որքան որ ամիկա մտած տեղերը կ'ամրացնէ ու կը հաստատուի: Լսեցիմք որ Անգլ. հեծելազօրը երեւցեր է Պէթտիբ; օդամաւներու երթուղարձ ըստ սովորութեան:

Երուսաղէմբնակ Ամերիկեան հպատակներուն երկու օրէ ի վեր կը ժողվէ կառավարութիւնը, քաղաքէն հեռացնելու համար: Յոպպէի Յակոբ Չէթէմեան Ամերիկահպատակ այսօր տարուեցաւ ոստիկանութեան պաշտօնատունը, գիշերը հոն պիտի մնայ:

Նոյ. 28, Չորեքշաբթի: Առաւօտուընէ (Ժամը 6իմ) սկսաւ հրետամի սաստիկ կոիւր, եւ տեւեց ամբողջ օրը: Զայները կուգան արեւմտեան կողմէն Բամալլայէն Պէթտիբի ուղղութեամբ: Վերջի օրերը շատ վիրաւորներ կը բերուին եւ բազմաթիւ մեռեալներ ու գերի կայ կ'ըսուի: Հրետամի գործողութիւնը սաստիկ է, բայց պատերազմի վիճակն ու

մանրամասնությունները չենք գիտեր: Խօսք կայ որ Պեթտիր եւ Յովհաննու Ծնունդ գրաւուած եմ եւ Ռամալլայէն Օսմանեան ուժերը վտարուած: Երուսաղէմի արեւմուտքը Յովհ. Ծմնողեան կողմէն Անգլիական օդապարիկ դիտարամ մը երեւցաւ ու ամբողջ օրը միեւնոյմ տեղը մնաց անշարժ: Անկէ թշնամիին դիրքերը կը դիտուիմ, հեռաւորութիւնները կը ճշդուիմ ու հեռաձայնով տեղեկութիւններ կը տրուի եղեր, որպէսզի այդ ուղղութեամբ հրետանին գործէ:

Յակոբ Զէթնեանի համար եղած դիմումները անհետեւանք մնացին: Անկասկած պիտի հեռացուի Երուսաղէմէն ինչպէս ձեռք առնուած միւս Ամերիկեան հպատակները:

Նոյ. 29, Հիմզաբքի: Ամբողջ օրը հրետանիի կռիւ: Արդիւնքը մեզի անյայտ: Ինչպէս կ'երեւի Օսմ. Բանակը հետզհետէ կը կազմակերպուի ու գամազամ կէտերու վրայ պաշտպանողական դիրքեր կը բռնէ: Երէկ քանի մը թնդամօթներ գետեղուած եմ Ռուսաց վանքին մէջ: Այսօրուան լուրերը կը հաւաստիացնեն թէ Սարոմայի դաշտին վրայ, Թուլքերիմի հարաւակողմը Օսմանցիք յաջողեր են ետ մղել թշնամի եւ 11 գերի ու 6 միթրայիօզ գրաւել: Յունաց վանքի երեք սիմօղականներ պահուած էին ու ըմկերմերուն հետ չէին գացած Դամասկոս: Կը լսենք որ կառավարութիւնը 12 հոգեւորականներ ձերբակալելու սպառնացեր է գամոնք դուրս հանել Երուսաղէմէ, եթէ պահուողները չյամձմուիմ:

Նոյ. 30, Ուրբաթ: Ամբողջ օրը լռութիւն կը տիրէր, միայն հեռուէն թնդամօթի խուլ որոտներ լսուեցան ու քանի մը հատ ալ մօտէն: Նախընթաց օրուան պատերազմի մէջ Օսմանցիք ունեցեր են 1200էն աւելի մեռեալ եւ բաւական թիւով վիրաւոր: Մեներ են սպայ գումանտանի մը, մէկ օրտու գումանտանի եւ ոչ մուօզ սպաներ: Քաղաքի անձնատուութեան առաջարկ եղեր է կըսուի Անգլիացւոց կողմէն: Օսմանցւոց Զիթնեանց լերան հիւսիսակողմը թնդամօթներ գետեղելին տեսնողներ եղեր են:

Դեկտ. 1, Ծաբաթ: Ամէն օրուան պէս թնդամօթներ որոտացին հեռուէն եւ մօտէն, Անգլիական օդանաւեր գացին եկան, բայց պատերազմի վիճակի մասին ստոյգ տեղեկութիւն չունինք: Օսմանցիք Թնդամօթներ գետեղած են Ռուսաց վանքին մէջ եւ ուրիշ բնակութիւն գտնուած վայրերը, եւ այնտեղերէն ի հարկին պիտի պաշտպանեն քաղաքը: Այսօր Բէթղեհէմի կողմը ձիաւոր զօրքեր ղրկուեր են այն տեղերու պաշտպանութեան համար: Հետզհետէ կը ստուգուի այն լուրը՝ թէ Անգլիացիք առաջարկեր են Երուսաղէմի անձնատուութիւնը երկու բանագմացներու միջոցաւ եւ մերժում ստացեր են:

Յունաց Վանքի պահուած երեք սիմօղականները անձնատուր եղեր ու այսօր ղրկուեր են Դամասկոս: Օթոմոսպիլով ղրկուեցան վեց Ամերիկեան հպատակներ, որոնց մէջ էր Յակոբ Զէթնեան:

Դեկտ. 2, Կիրակի: Այսօր երրորդ օրն է, որ պատերազմական լուրք գործողութիւն չի կատարուիր: Երեկոյեան ժամը 4ին մօտերը քաղաքին վրայէն անցնող քանի մը Անգլիական օդանաւերու վրայ ռումբեր արձակեցին Ռուսաց Վանքը գետեղուած թնդամօթներէն, ապարդիւն:

Դեկտ. 3, Երկուշաբթի: Առաւօտեան ժամը 6էն սկսեալ թնդամօթի հեռուոր ձայներ անընդհատ արեւմտեան կողմէն, բայց չիմացանք թէ ո՞ր դիրքերէն կուգային: Երեկոյեան դէմ 7 Անգլիական օդանաւեր շատ բարձրէն Բէթղեհէմի կողմերը ուղղուեցան:

Ժամը 3ին, երեկոյ, ոստիկանութեան Տեսուչ ճելալ Պէյի կողմէ կանչուեցայ քաղաքապետարան, ուր կը գտնուէին քաղաքապետն ու Արիֆ պէյ: Ոստիկանապետը հաղորդեց Երուսաղէմը պաշտպանող զօրաբաժնի հրամանատար Ալի Ֆուլայի հրամանը, որով քաղաքի ազգաբնակիւթեան մեծ քանակութեամբ զօրք, կարպետ, էիրամ եւ թաղիկ կը պահանջուէր իրամներու մէջ կուտող զօրքերու պատսպարութեան համար: Վանքերու եւ ժողովուրդին վրայ բաշխում եղած ըլլալով, հարիւր կտոր մեր վանքէն ու հոն բնակող զաղթականներէն պահանջուեցաւ: Վերադարձայ ու հաղորդեցի ուր որ անկ էր եւ ամմիջապէս սկսանք հաւաքել, վաղը միմէն կէսօր յամձմուելու համար ըստ պայմանի:

Նշանակուած կտորները միմէն վաղը չյամձմողներուն սպառնալիք եղաւ քաղաքէն վտարել եւ ղրկել հետիոտն:

(Ծարունակելի)